№ 115 Յունիսի 25 (Յուլիսի 7) 1881 Յունիսի 25 (Յուլիսի 7) № 115

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Գտարարարարագիր գիտում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшака»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կովկասեան համալսարան։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Գանձակից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Թիւրքիա և հայոց խնդիր։ Քաղաքական տեսութիւն։ Ֆրանսիա։ Նամակ Թիւրքիայից։ — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Նամակ Մոսկվայից։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

—

Ռուս մայրաքաղաքների լրագրութիւնը նորից սկսեց խօսել Կովկասեան համալսարանի վրա։ Այդ հարցը նորից զարթեցնելու առիթ եղաւ այն խոշոր նուիրատուութիւնը յօգուտ լինելու Կովկասեան համալսարանի, որ արել են պ. պ. Ա. Կօրգանօվ, Ա. Պրիդօնօվ և Փիթօևով եղբայրները։

Համալսարանի պահանջը մեզանում, քանի գնում է, աւելի և աւելի սաստիկ է զգացվում և մենք հաւատացած ենք, որ եթէ յոյս լինէր Թիֆլիսի մէջ համալսարանի իրագործման,—վերև յիշված նուիրատուութիւնները աւելի և աւելի սովորական բան կը դառնային մեզանում։

Թիֆլիսի համալսարանի գաղափարի թշնամիները բերում են միշտ, որպէս ապացոյց թէ մեզանում այդ տեսակ հիմնարկութիւն չէ կարող աջողվել, այն իրողութիւնը, իբր թէ Անդրկովկասում և Կովկասում չը կան բաւական թւով միջնակարգ դպրոցներ, որոնք կարողանային համալսարանին ուսանողների բաւականացուցիչ կոնտինգէնտ տալ։ Այդ տեսակներին մենք կը պատասխանենք որ, մեր կարծիքով, մեր երկիրը համեմատելով օրինակ Կազանի, կամ Օդէսայի ուսումնարանական շրջանների հետ, ունի աւելի շատ միջնակարգ դպրոցներ։ Բացի սորանից միթէ Կազանի, Խարկովի, Կիեվի կամ Օդէսայի համալսարանները ուսանողներ ունենալու համար յոյս են դնում իւրաքանչիւրը միմիայն իր ուսումնարանական շրջանի վրա։ Կարծում ենք որ հիմնելով Օդէսայի համալսարանը, տէրութիւնը յոյս ունէր որ նրա լսարանները կը լցնեն Ռուսաստանի այլ նահանգների երիտասարդներ։

Յայտնի է որ Ռուսաստանում կայ մօտ 80 միլիոն ժողովուրդ և միայն 9 համալսարան, ուրեմն մօտաւորապէս մի համալսարան 10 միլիոն ժողովրդի վրա, այն ինչ Շվէյցարիայում 5 միլիոն ազգաբնակութեան վրա 5 համալսարան կայ, ուրեմն իւրաքանչիւր միլիոն ժողովրդի վրա մի համալսարան է գալիս։ Եթէ ուրեմն 10 միլիոն ժողովրդի վրա մի համալսարան է հաշւում, պէտք է կարծել որ իւրաքանչիւր համալսարանը հիմնված է ոչ թէ այս կամ այն նահանգի համար միայն, որի կենտրոնում նա գտնվում է, բայց աւելի ընդարձակ շրջանի մտաւոր պէտքերի համար և ռուս իւրաքանչիւր համալսարանը իր ուսանողների կոնտինգենտը ստանում է պետութեան ամբողջ տարածութիւնից։ Այդպէս էլ կարելի է յուսալ, որ եթէ Թիֆլիսում կը հիմնվի մի համալսարան, նա կունենայ ուսանողներ ոչ թէ միայն Անդրկովկասի և Կովկասի գաւառներից, բայց և Ռուսաստանի ներքին նահանգներից, ինչպէս ռուսաց միւս համալսարանները։

Բացի սորանից Կովկասեան համալսարանը Ռուսաստանի սահմանագլուխ երկրի մէջ գտնվելով, կը գրաւի անշուշտ ուսում առնել և բարձր ուսում ստանալ ցանկացող երիտասարդներին Թիւրքիայից և Պարսկաստանից։ Դա կունենայ, ուրեմն, կրթիչ ներգործութիւն ոչ թէ միայն մեր երկրի վրա, բայց և մեր երկրին հարևան երկիրների վրա։

Նոյն իսկ այդ նպատակով, որպէս գի ռուսաց գիտութիւնը կրթիչ ներգործութիւն ունենար հարևան ասիական երկիրների վրա, մանաւանդ այդ երկիրների հայ երիտասարդութեան վրա, ինչպէս մենք մի քանի անգամ առաջարկեցինք, անհրաժեշտ կը լինէր թոյլ տալ որ համալսարանների դասախօսութիւններից մի քանիս, գոնէ, կարդացվէին հայերէն լեզուով։

Գալով նիւթական նուիրատուութիւններին յօգուտ ապագայ համալսարանի, մենք հաստատ կարող ենք ասել որ նուիրատուութիւնները կը կրկնապատկվին, եթէ այժմ Կովկասեան համալսարանին տրվէր ամբողջ Ռուսաստանից սիրված, անմոռանալի հանգուցեալ Կայսրի անունը։ Եթէ համալսարանը հիմնվէր Կայսր Ալէքսանդր II-ի յիշատակին, անհամեմատ աւելի մեծ գումարներ կը նուիրվէին, նրա իրագործմանը, քան թէ այժմ հիմնվող որբանոցի, որովհետև որբանոցը, որքան էլ անհրաժեշտ է, նշանակութիւն ունի միայն Թիֆլիսի համար, իսկ համալսարանը նշանակութիւն կունենար ամբողջ Կովկասի և Անդրկովկասի համար։

Համալսարանը Թիֆլիսի մէջ,— կը գրաւէր ամենաջերմ համակրութիւն և արձագանք մեր բոլոր գաւառական քաղաքներում։ Տեղացին ուզում է բարձրագոյն ուսում տալ իր որդուն, բայց ուղարկելով նրան հիւսիս, շատ անգամ զրկվում է նրանից. կամ անբուժելի հիւանդութիւն, շատ անգամ անգութ մահը, անսովոր կլիմայի պատճառով, բաժին է լինում թշուառ երիտասարդի, կամ ընկնելով ծայրայեղ, յեղափոխական ռուս կուսակցութիւնների ազդեցութեան տակ, կովկասեցի երիտասարդը, կովկասեան սարերի այն կողմը, օտարանում է իր մայրենի կովկասեան երկրի կեանքից և անհետանում է....

Ամենայարմար բոպէն կը լինէր այժմ յարուցանել Ալէքսանդր II-ի անմոռանալի յիշատակին կովկասեան համալսարանի հիմնելու միտքը։ Ցուսանք որ մեր միտքը ամենաջերմ արձագանք կը գտնի ամեն մի մտածող մարդու սրտում։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

Յունիսի 17-ին

Անցեալ 1880 թ-ի հոկտեմբերի 11-ից սկսեալ մեր ժողովարարութիւնը ինչպէս վանայ սովալներին յետաձգվեցաւ մինչև այսօր այն պատճառով, որ յոյս ունէինք այն մարդկանցից ևս ստանալ նուէրներ, որոնք զանազան պատճառներով մնում էին. բայց ի զուր սպասեցինք և այժմ արտագրելով ստորագրութեան մատեանից անուանական ցուցակը, խնդրեմ հրատարակել պատուական լրագրիդ միջոցաւ ի գիտութիւն նուիրատուաց։

Ստորագրութեան գումարն եղաւ 1166 ր., որից համաձայնութեամբ ժողովարարութեան անձանց տուեալ եղև մէկ վանեցի չքաւոր մարդու 26 ր. մնաց 1140 ր. և սրանից ունեմ ղրկած խմբագրութեանդ 700 ր. նոյեմբերի 5-ին 1880 թ. և երկրորդ անգամ դեկտեմբ. 29-ին նոյն տարվայ 275 ր., որ է 975 ր., մնում է այժմ 165 ր. ահա այս մնացորդ գումարը ցուցակի հետ ուղարկեցի։ Խնդրեմ խնայարհաբար հասուցանել ըստ պատկանելոյն։

Նուիրատուաց անուանական ցուցակը.—Եղբայրք Նաբաթեանց 100 ր., եղբայրք Տէր-Ներսէսեանց 50 ր., Աղէքսանդր և Գրիգոր Իսահակեանց 50 ր., Ղահրաման Ս. Օհանէսեանց 25 ր., Մ. Մանուկեանց 15 ր., Սամիկօն Մկրտումեանց 10 ր. ևս իւրաքանչիւր ամիս 2 ր., նոյեմբեր, դեկտեմբերի 1880 թ. և յունվարի, փետրվարի, մարտի, ապրիլի և մայիսի գում. 14 ր., Աղէքսանդր Նայեանց 10 ր., տէր Եղիշէ և Արշակ Աղիբեգեանց 10 ր., Բարսեղ Շերմազանեանց 5 ր., Իվան Կարագա-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

—

Յունիսի 12-ին

Յաւում եմ, որ զբաղված լինելով պարապմունքներով, չը կարողացայ իր ժամանակին հաշիւ տալ «Մշակի» ընթերցողներին Մոսկվայի հնագիտական ընկերութեան վերջին նիստի մասին— ինչպէս այդ ես արել եմ արդէն մի քանի անգամ։ Բայց որովհետև այդ նիստի վերաբերութեամբ մօտ օրերս լոյս տեսաւ «Մշակի» 100 համարում մի թարգմանական յօդուած, որտեղ մի քանի փաստեր և իրողութիւններ միանգամայն աղաւաղած են և ծռմռած— ես աւելորդ չեմ համարում համառօտ կերպով մանաւորել «Մշակի» ընթերցողներին այն տպաւորութիւնը, որ թողեց իմ վրա վերջին նիստը։ Այսուղղելխաւորապէս ես կը խօսեմ նիստի այն մասի վրա, որ վերաբերվում է հայոց պատմական գրականութեանը. խօսքս պ. Էմինի րէֆէրատի մասին է, որ այդ օրը կարդաց ժողովում իր մի նոր բրօշիւրի առաջաբանը— Մար-Աբաս Կատինան և նրա պատմութիւնը։

Նախ և առաջ ես պէտք է ասեմ, որ «Մշակի» 100 համարում տպած թարգմանական յօդուածը ֆէլիետոն է— ֆէլիետոնին յատուկ երգիծական և ծաղրական պարագաներով, որոնց հայ թարգմանիչը՝ չը գիտեմ ինչու դուրս է թողել հայ բնագրից և դրանով այն թեթև, ֆէլիետոնական յօդուածին տուել մի ծանրակշիռ ուսումնական գրուածի ձև։ Եւ յայտնի բան է, որ այդպիսի յօդուածները միայն ֆէլիետոնի ձևով կարող են դուրս գալ «Голосъ»-ի նման լրջամիտ լրագրի էջերում, յօդուածներ, որտեղ առանց փաստերի, առանց ապացոյցների կարելի է ուղղակի ասել, թէ «պ. Էմինը ինքն ևս չէր հասկանում ինչ էր ասում.» կամ թէ—«պ. րէֆէրէնտը խորենացու պատմութեան աղբիւրը համարելով ժողովրդական վիպասանութիւնը, շատ լաւ ասաց, լաւ՝ որովհետև կարճ է պատասխանը, իսկ կարճ է նրա համար որ բոլորովին մութ է...» Այս և սոյնանման սրամիտ (?) ֆրազներ է մէջ բերում Голосъ-ի ֆէլիետոնիստը, որոնցից ընթերցողը ոչինչ չէ կարող հասկանալ, ես աւելի մի օգուտ քաղել նրանցից։

Բոլորովին դիտաւորութիւն չունենալով բանակռիւ սկսել անանուն ֆէլիետոնիստի հետ և ապարդիւն համարելով այդպիսի մի վարմունք իմ կողմից — ես մի քանի խօսքով կաշխատեմ հաղորդել ընթերցողներին պ. Էմինի րէֆէրատի մասին, որի առիթով այնպիսի օտարոտի կարծիք է յայտնել Голосъ-ի ծաղրաշարժ ֆէլիետոնիստը։ Կրկնում եմ մի քանի խօսքով, որովհետև պ. Էմինի գրքոյկը յուլիսին լոյս կը տեսնի և ամեն մէկը մեզանից կարող է կարդալ նրան և ծանօթանալ մեր գիտնական հայրենակցի կարծիքների հետ այնպիսի կարևոր և առաջնակարգ խնդրի մասին, ինչպէս է Աստրի Մար-Աբասը և նրա պատմութիւնը, որոնց հետ մինչև այսօր անբաժան կապված է և մեր ազգային պատմութեան սկիզբը։

Պ. Էմինը իր րէֆէրատի մէջ զարթեցրեց մի շատ հետաքրքրական խնդիր. նրա նպատակն է հերքել այն քաղդէական ծագումը, որ մինչև այսօր վերագրած է մեր պատմութեանը Մար-Աբասի շնորհիւ, հերքել նոյն իսկ Մար-Աբասի գոյութիւնը, համարելով նրան մի կեղծ, մտացածին անձն և ապացուցանել, որ բոլոր Հայկազունեաց պատմութիւնը՝ Հայկից սկսած մինչև Վահէ (մօտ 2000 տարվայ միջոց) ոչ թէ արձանագրած է եղել Նինուէի դիւանում օտար և շատ անգամ թշնամի թագաւորների հրամանով (ինչպէս ասում է Խորենացին), այլ՝ ինչպէս ամեն մի հին ազգի պատմութիւն — առնված է ժողովրդական վիպասանութենից։ Ուրեմն՝ մեր հնագոյն պատմութեան աղբիւրը ոչ թէ քաղդէական է կամ ասորեստանական, այլ բուն ազգային, որով նա աւելի հաւատի է դառնում մեր աչքում և հաւատի արժանի, քան եթէ նա առնված լինէր օտար տէրութեան դիւանից (архивъ)։ Այս էր պ. Էմինի րէֆէրատի գլխաւոր միտքը. բայց այս միտքը նա զարգացրեց և ապացուցեց զօրեղ փաստերով և խիստ լօգիքական հետևողութեամբ. նա մէջ էր բերում Խորենացու խօսքերը և այդ խօսքերով նա ցոյց էր տալիս նրա հակասութիւնները և սխալները։ Զարմանալի բան է, որ ֆէլիետոնիստը պ. Էմինի մէջ բերած տասնաւոր փաստերից և ոչ մէկը չէ յիշում։

Ընթերցողին աւելի շօշափելի և հասկանալի անելու համար Մար-Աբասի անվաւերականութիւնը՝ ես այստեղ առաջ կը բերեմ այդ փաստերից մի երկուսը։

a) Խորենացին Վաղարշակի բերանով ասում է, թէ սրա ժամանակ (Քրիստոսից 150 տարի առաջ) իբր թէ Հայաստանում «ոչինչ կարգ չը կար, ոչ մեհեանների պաշտամունք, ոչ աշխարհի գլխաւորներից առաջինն էր յայտնի և ոչ վերջինը. ամէն բան խառնիխուռն և վայրենի» (Խոր. Ա. գլ. Թ.) թէ՝ ցանկալով իմանալ հայոց ազգի պատմութիւնը և չը գտնելով ոչ մի տեղական աղբիւր և ոչ էլ մի գրագէտ հայ մարդ, Վաղարշակը յանձնում է Մար-Աբաս անունով մի ասորու գնալ Նինուէ և այնտեղի դիւանից արտագրել ու բերել իրան հայոց պատմութիւնը։ Բայց մի և նոյն Խորենացին իր պատմութեան մէջ քանիցս անգամ յիշում է, որ հեթանոս հայերի մէջ քրմերը գրում էին պատմական նշանաւոր անցքերը, թէ կային մեհենական գրքեր. կար և մի գիրք «Թագաւորաց» անունով, ուր արձանագրում էին հայոց թագաւորների արարքը։ Բացի դրանցից կային և այլ շատ աղբիւրներ. ինչպէս— «բանաւոր երգարանները», «վիպասանական երգերը», որոնցից շատերը ժողով-

դեանց 5 ր., Գրիգոր քահանայ Թումանեանց 6 ր., Գրիգոր քահանայ Բաբաջովխեանց 5 ր., Թադէոս վարդապետ յաջորդ 5 ր., Մկրտիչ քահանայ Տէր-Յովսէփեանց 3 ր., Յովհաննէս Խաչակեանց 25 ր., Իսրայիլ Մամիկոնեանց 3 ր., Յակոբ և Յովհաննէս Լիսկեանց 25 ր., Աղէքսանդր Ղուկասեանց 15 ր., Միրզաջան Բարուչեանց 25 ր., Մինայ Ա. Թեմուրեանց 10 ր., Փիրաղայ Ա. Թեմուրեանց 10 ր., երեք անյայտ անձինք 20 ր., երկու անյայտ անձինք 6 ր., եղբայրք Ափանոսեանց 100 ր., տիկնայք Ափանոսեանց 20 ր., եղբայրք Մալխեանց 25 ր., Աղայ Աղայեանց 15 ր., Սարգիս Ա. Գրիգորեանց 10 ր., Մարտիրոս Սափարեանց 3 ր., մահտեսի Իվան Սհակով 5 ր., Սէրոբ Տէր-Մարտիրոսեանց 2 ր., Մելիք Բաղդասարեանց 5 ր., Խաչատուր Մելիքեանց 5 ր., Մարտիրոս Դարչինեանց 3 ր., մահտեսի Բէրոբ Տէր-Մարտիրոսեանց 25 ր., Մարտիրոս մահտեսի Քօչարեանց 3 ր., Միխայիլբեգ Ղազարբեգեանց 3 ր., Շամիր Տէր-Յովսէփեանց 3 ր., Յովհաննէս մահտեսի Աբրահամեանց 3 ր., Աղէքսանդր Նազարիչ Մելիքեանց 15 ր., Համբարձում Ղարիբեանց 10 ր., Մելիք Մկրտչեանց 16 ր., Իվան Ս. մահտեսի Օհաննէսեանց 10 ր., Մկրտիչ Մանուէլեանց 10 ր., Եսայի Ղազարեանց 3 ր., Աղաջան Մայիլեանց 5 ր., Ստեփան Շաքեանց 3 ր., Յարութիւն Նանասեանց 15 ր., Յովհաննէս Փաթալեանց 10 ր., մահտեսի Վիրաբ Մկրտումեանց 10 ր., Միխայիլ Սարգիսեան Ազիզեանց 3 ր., Գրիգոր Սհակեանց 5 ր., Մամիկոն Տէր-Եփրեմեանց 5 ր., Գրիգոր քահանայ Տէր-Մակարեանց 10 ր., Ավետիս Յովհաննէսեանց 10 ր., Պօղոս Մարգարեանց 10 ր., Աստուածատուր Բաղալքոխեանց 5 ր., Կարապետ Վ. Սիմէոնեանց 3 ր., Յակոբ վարժապետ Տէր-Յարութիւնեանց 5ր., Յովսէփ մահտեսի Պետրոսեանց 5 ր., Աբրահամ Մելիքեանց 10 ր., Աղէքսանդր Մկրտչեանց 3 ր., Յովհաննէս Աւագեանց 3 ր., Աւագ Հալաբեանց 25 ր., Միխայիլ Համասփիւռեանց 5 ր., Մեժլում Մելիք-Շահնազարեանց 5 ր., Սողոմոն Նալչակարեանց 10 ր., Յովսէփ մահտեսի Մնացականեանց 10 ր., տիկին Մարիամ մահտեսի Մնացականեանց 2 ր., տիկին Խուրդայ 1 ր., Սերգի Սհակեանց 5 ր., Ավետիս Կիրակոսեանց 25 ր., Ռոստոմ Սարգիսեանց 5 ր., Աննայ Յովհաննէսեան Պրոզոպոպեանց 10 ր., Մադաթբեգ Մելիքեանց 5 ր., Գրիգորբեգ Մելիք-Շահնազարեանց 3 ր., Ավետիս Առստամեանց 3 ր., Ավետիս Մկրտումեանց 3 ր., Խաչատուր Վարդանեանց 5 ր., Գրիգոր Ստեփանեանց 3 ր., Ճհան Խոջայեանց 3 ր., Համբարձում Օհանջանեանց 3 ր., Ասլան Մոսէսեանց 10 ր., Աւագ Սհակեանց 10 ր., Օհաննէս Մարտիրոսեանց 3 ր., Սիմոնբեգ Զօրաբեանց 2 ր., Սիմոն Վարդանեանց 5 ր., Աղէքսանդր Տէր-Գէորգեանց 3 ր., Իսրայիլ Գաբրիէլեանց 5 ր., Եփրեմ Ենկիբարեանց 3 ր., Սողոմոն Եաւրիգովեանց 10 ր., Մկրտիչ Օհաննէսեանց 5 ր., Համբարձում Հալդարխանցուց 3 ր., Աղամիր Մնացականեանց 5 ր., Աղա տիրացու Առաշանեանց 2 ր., Սարգիս Եղիազարեանց 1 ր., Յարութիւն Մատթէոսեանց 1 ր., Բաղիշ Միրզայեանց 1 ր., Մկրտիչ Հախվերդեանց 1 ր., Մոսէս Խաչատուրեանց 1 ր., Աստուածատուր Ղազարչեանց 2 ր., Գրիգոր Փաֆիլեանց 1 ր., Յովհաննէս Սիմէոնեանց 1 ր., եղբայրք Միսքարեանց 2 ր., Մանուէլ Ամիրխանեանց 3 ր., Շամիրբեգ Բալաղեանց 5 ր., Մկրտիչ Համասփիւռեանց 1 ր., Աղէքսանդր Վարդազարեանց 1 ր., Աւետիս Համասփիւռեանց 1 ր., Սողոմոն Առաքելեանց 1 ր., Աւագ Խեչումեանց 1 ր., Պետրոս Սափարեանց 1 ր., Պօղոս Վարդանեանց 1 ր., Սհակ Տէր-Սհակեանց 5 ր., Արտաշէս Մատինեանց 5 ր., Մկրտիչ տիրացու Օհաննէսեանց 3 ր., Սերգի Աթայեանց 3 ր., մահտեսի Յովհ. Վարդապետեանց 10 ր., Սիմոն մահտեսի Աղաբէգեանց 5 ր., Գրիգոր Գասպարեանց 3 ր., եղբայրք Ս. Ղաբուզեանց 15 ր., եղբայրք Մնացականեանց 15 ր., Սարգիս Աւագեանց 5 ր., Սիմէոն Հայրումեանց 5 ր., Միխայիլ Մելիքեանց 5 ր.։

Գումարն է 1166 ր. տուած է մէկ չքաւոր Վանեցի մարդու 26 ռուբլի, մնաց 1140 ռուբլի, ղրկած եմ փոստով 700 ռուբլի, ևս երկրորդ անգամ 275 ռուբլի, այժմ յունիսի 17-ին ստացէք 165 ր.։ Ընդամենը 1140 ռուբլի, առանց փոստի ծախսերին։

Մարտիրոս Նաբաթեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ գրում են Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ. «Քանի մի ժամանակ է տեղիս հայ հասարակութիւնը հաւաքել էր մի գումար աղքատ հայ ուսանողներին օգնելու համար և յանձնել է այդ գումարը ուսանողներին։ Ուսանողները չունենալով միջոց պահել իրանց մօտ իրանց ընծայած գումարը, պահ տուեցին այդ գումարը մի հարուստ հայ վաչխառուին։ Սա տուեց ուսանողներին մի ստացական։ Այժմ ուսանողները պատահմամբ կորցրին այդ ստացականը, իսկ հարուստ կրէդիտորը ուրանում է իր պարտքը և փողերը յետ չէ տալիս, ասելով որ երբէք ոչինչ պահ տուած չեն իրան։»

—

Երևանի «Պակ» լրագիրը հաստատում է իր վերջին համարում վեհափառ. կաթողիկոսի անբուժելի հիւանդութեան լուրը։

—

Յունիսի 23-ին Թիֆլիսի ռուս թատրոնական խումբը ներկայացրեց պ. Պալմի «Господа избиратели» նոր պիէսան։ Գլխաւոր դերերից մէկը խաղում էր տիկին Բալֆ, նոյնպէս խաղում էր և ինքն հեղինակը։ Թատրոնը լի էր և պիէսան որ կենդանի կերպով նկարագրում է ռուս քաղաքների քաղաքային ընտրութիւնների գաղտնի ինտրիգաները, մեծ համակրութեամբ ընդունվեցաւ հասարակութիւնից։ Հեղինակը ուզեց ցոյց տալ որ քաղաքային ընտրութիւնների գաղտնի թելադրողը ոչ թէ հասարակական, այլ անձնական շահ է լինում մեծ մասամբ։ Նոյն իսկ պիէսան մեծ բեմական արժանաւորութիւններ ունի, գրուածքի սիրոյ ինտրիգան շատ լաւ է դուրս բերված և թէ կանանց և թէ տղամարդկանց տիպերը այնքան գեղեցիկ և կենդանի են, որ կարծես մեր ամենօրեայ ծանօթները լինէին։

—

ԹԻՖԼԻՍԻ քաղաքային վարչութիւնը խընդրում է մեզ յայտնել որ վարչութեան մէջ բացված է ստորագրութիւն ի Տէր Հանգուցեալ Թագաւոր Կայսր Ալէքսանդր II-ի յիշատակին Մոսկվայի Կրեմլի մէջ հիմնվող արձանի համար։ Ստորագրվել կարելի է վարչութեան մէջ ամեն և օր, առաւօտեան 9 ժամից մինչև 1 ժամ կէսօրից յետոյ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

—

Կ. Պոլսից „Polit. Corresp.“ լրագրին գրում են հետևեալը։

Ռուս դիպլոմատիան, որ մի քանի ժամանակ լուռ էր մնում, կրկին սկսում է գործել։ Նախ և առաջ նա ձեռք է տալիս Զէրնօգորիայի խնդրին, այդ երկրի սահմանների վերաբերութեամբ։ Միւս պետութիւնների դեսպանները այդ խնդրի վերաբերութեամբ միացան ռուս դեսպանատան հետ։ Ռուսաստանը ղեկավարում է, ըստ երևոյթին, բոլգարական խնդիրը և բացի սորանից ցոյց է տալիս ձգտում յարուցանել և Թիւրքիայի Ֆինանսական խնդիրը, յայտնելով իր պահանջները զինուորական կօնտրիբուցիայի (վարձատրութեան) վրա, որ Թիւրքիան մինչև այժմ Ռուսաստանին չէ վճարել։

Վերջապէս նորերումս հայոց պատրիարք Ներսէսը յայտնել է իր բարեկամներից շատերին, որ իր ստացած ամենաճիշդ տեղեկութիւններին համեմատ, Ռուսաստանը վճռել է ամենածանր կերպով ձեռք տալ հայոց խնդրին և ամենաեռանդոտ կերպով յանձն է առել համոզել միւս պետութիւններին վերջնական լուծում տալ այդ խընդրին։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Յունիսի արշաւանքի և Կայրօլիի մինիստրութեան անկման պատճառով ընդհատված բարեկամական յարաբերութիւնները Ֆրանսիայի և Իտալիայի մէջ վերականգնված էին Թիւնիսի Ֆրանսիական կառավարութեան խաղաղասէր յայտնութիւնների շնորհիւ։ Իտալական մինիստրութեան փոփոխութիւնը չը փոխեց Իտալիայի արտաքին քաղաքականութիւնը, որ այժմ էլ առաջվայ պէս խաղաղ բնաւորութիւն ունի։ Իտալացիների և Ֆրանսիացիների անսպասելի կռիւը Մարսելի մէջ երկու պետութիւնների յարաբերութիւնները վտանգաւոր դարձրին։ Արիւնահեղ կռիւները այնքան շուտ չեն մոռացվում, որքան քաղաքական անբաւականութիւնները երկու պետութիւնների մէջ։ Մրցութեան և թշնամութեան զգացմունքները, որոնք արտայայտվում են փողոցային կռիւներով, աւելի մեծ նշանակութիւն ունեն, քան թէ պաշտօնական բանակռիւները Ֆրանսիական և իտալական պաշտօնական լրագիրների մէջ։ Մարսելի մէջ պատահած անկարգութիւնների շնորհիւ նոյնը կրկնվեցաւ և իտալական մի քանի քաղաքների մէջ, որոնց ազգաբնակութիւնը սկսեց վրէժ առնել Ֆրանսիացիներից Մարսելի կռիւների համար։ Փոխադարձ ատելութիւնը տարածված է երկու ազգութիւնների յայտնի մասերի մէջ։ Իտալացիները սկսում են յիշել քաղաքական հին հաշիւները, որոնց մոռացել են կառավարութիւնները, բայց որոնք մնացել են ժողովրդի յիշողութեան մէջ։ Իտալացիների կարծիքով, Ֆրանսիացիները պատճառ են դարձել իտալական ազգային դժբաղդութիւնների։ Մինչև անգամ Ֆրանսիայի արած ծառայութիւնները իտալական միութեան գործին և իտալացիների ազատվելուն աւստրիական լծից ժողովուրդը վերաբերում է Նապոլէօնի յափշտակող քաղաքականութեանը։ Իտալացի ազգասէրները մտաբերում են Ֆրանսիայի պահպանողական դերը Հռօմի և պապական կալուածների վերաբերութեամբ։ Նրանք յիշում են այն թշնամական և ծաղրելի ընդունելութիւնը, որ գտաւ Ֆրանսիական ազգային ժողովի մէջ իտալական ժողովրդական հերոս Գարիբալդին, որ կռուել էր գերմանացիների դէմ։

ված էին և պահվում հին արքունի դիւաններում (Խոր. Ա. գլ. ժդ.) և այն։ Զարմանալի է և միանգամայն անհասկանալի, ինչու Վաղարշակը մի կողմ թողնելով տեղական հաւաստի աղբիւրները, դիմում է ասօրի մարդու և հայոց պատմութիւնը պատում է Նինուէի դիւանում։

b) Պ. Էմինը հաղորդեց, որ Մար-Աբասը կարող չէր երթալ Նինուէ և այնտեղի դիւանից բերել հայոց պատմութիւնը—քանի որ ոչ միայն Վաղարշակի օրով, այլ Նրանից էլ 200 տարի առաջ այդ քաղաքը քանդված, աւերակ էր դարձած, մինչև հետքը անգամ չէր կարելի նշմարել։

c) Խորենացին ասում է, թէ «Վաղարշակ՝ ըստանալով Մար-Աբասի ձեռից հայոց հաւաստի պատմութիւնը և համարելով նրան իր գանձերից ամենաթանգագինը, զգուշութեամբ պահում է իր արքունիքում—Նրա մի մասը արձանագրել տալով կոթողի վրա» (Խոր. Գր. Ա. գլ-թ)։ Սրա առիթով պ. Էմինը նկատեց. ինչպէս է, որ ոչ մի պատմիչ—թէ յոյն, թէ ասօրի և թէ մի այլ ազգի—ամենևին չեն յիշում այդպիսի մի նշանաւոր արձանագրութեան մասին, եթէ նա արդարև գոյութիւն ունէր, և այն էլ այնպիսի մի կենտրօնում, ինչպէս էր Մծբին մայրաքաղաքը։ Ցոյց—ինչպէս է պատահել, որ Մար-Աբասի այդ պատմութիւնը միայն Խորենացու ձեռքն է ընկել. մինչդեռ ոչ նրանից առաջ և ոչ Նրանից յետոյ ոչ ոք չէ տեսել այդ գիրքը և չէ լսել նրա մասին։ Մինչև անգամ Ագաթանգեղոսը (Խորենացուց մօտ 100 տարի առաջ), որ իր պատմութիւնը գրեց Տրդատ թագաւորի հրամանով և որը՝ երևի թէ՝ իրաւունք կունենար քրքրելու արքունի դիւանները, Ագաթանգեղոսն էլ ամենևին չէ յիշում Մար-Աբասի մասին։ Հապա որտեղ էր այդ գիրքը մինչև Խորենացին, որտեղից է գտել Նրան ինքն Խորենացին—այդ նա ամենևին չէ հաղորդում մեզ։

Այս և սրանց նման ուշադրութեան արժանի շատ փաստեր մէջ էր բերում պ. Էմինը, վերլուծելով այդ փաստերը և ցոյց տալով Խորենացու իր խօսքերին անդադար հակասութիւնները և կամ կասկածի և տարակուսանքի առիթ տուող հանգամանքներ—Նրա առաջին գրքի վերաբերութեամբ, որ պարունակում է իր մէջ հայոց հնագոյն պատմութիւնը։ Բայց՝ ինչպէս երևում է՝ ռուս ֆէլիետօնիստը բնաւ չէ հասկացել ոչ պ. Էմինի դիտաւորութիւնը և ոչ նրա բէֆերատը. նա կարծում է, որ հերքելով Մար-Աբասի գոյութիւնը, դրանով իբր թէ հետևաբար «հերքվում է և բոլոր հայոց պատմութիւնը։» Շատ սխալ կարծիք. կարող է չը լինել Մար-Աբասը, կարող է չը լինել նրա պատմութիւնը, բայց կարող չէ չը լինել հայոց հնագոյն պատմութիւնը, որովհետև այդ պատմութիւնը՝ ինչպէս ապացուցանում է պ. Էմինը—յօրինված է ժողովրդական վիպասանութիւնից։ Գուցէ այդ խօսքը—«ժողովրդական վիպասանութիւն» ֆէլիետօնիստը չէ հասկացել և կամ՝ չէ ուզեցել հասկանալ, նկատելով, «թէ այդ պատասխանը չատ կարճ է և մի և նոյն ժամանակ բոլորովին մութ։»—Ճշմարիտ է, պ. Էմինը չը կարդաց այն ժողովում ժողովրդական վիպասանութեան մասին, բաւական համարելով միայն ցոյց տալ նրա վրա, իբրև առաջին աղբիւր հայոց հնագոյն պատմութեան. բայց դրա պատճառն էլ, ես կարծեմ, այն էր, որ գիտական պարոնի բէֆերատի նիւթը ուրիշ բան էր—այսինքն—Մար-Աբասի անհաւաստի և մտացածին լինելը. իսկ բուն ժողովրդական վիպասանութիւնը առանձին նիւթ է, որ՝ ինչպէս ինքն պ. Էմինը ասաց, կը կազմէ նրա բրոշիւրի երկրորդ մասը և բաւականին երկար լինելու պատճառով՝ կարող չէր կարդացվել հնագիտական ընկերութեան այդ նիստում։ Ուրեմն գրքոյկը բաղկացած կը լինի երկու մասնից. առաջնում՝ հերքվում է Մար-Աբասը իր պատմութիւնով, երկրորդում՝ ապացուցանվում է հայոց հնագոյն պատմութեան աղբիւրը—ժողովրդական վիպասանութիւնը։—Ֆէլիետօնիստին պէտք էր մի փոքր համբերութիւն ունենալ և այդ գրքոյկը կարդալուց յետոյ արդէն սրամտութիւններ անել. բայց եթէ նա այդքան անհամբեր էր, լաւ չէր հէնց այնտեղ՝ ժողովում՝ յայտնէր իր կարծիքը պ. Էմինին, հէնց այնտեղ բանակռիւ սկսէր բէֆերենտի հետ. գուցէ այն ժամանակ աւելորդ լինէր իր ֆէլիետօնը....

Առ այժմ այսքանը բաւական է պ. Էմինի բէֆերատի մասին. կը սպասենք նրա գրքոյկի լոյս տեսնելուն, երբ կարելի կը լինի՝ առանց այս և այն սրամտութիւնների, կամ անփաստաւ անհիմն դատողութիւնների—աւելի հաստատ ֆակտերի վրա հիմնել մեր կարծիքները, թող դրանք լինէին հակառակ կամ համաձայն պ. Էմինի կարծիքներին։

Վերջացնում եմ նամակս՝ հերքելով հայ լրագրութեան մէջ տարածված լուրը—իբր թէ այս ամառ լինելու չէ Թիֆլիսում V հնագիտական ժողովը. ժողովը՝ ինչպէս որ դեռ անցեալ տարի վճռած էր՝ սկսվելու է առաջիկայ սեպտեմբերի 8-ից և կը տևէ, երևի թէ, 2—3 շաբաթ. սրա մասին դեռ ապրիլին յայտնեց լրագիրներում Մոսկվայի հնագիտական ժողովի նախագահ կոմս Ուվարովը։

Ցանկալի էր, որ մեր ժողովրդական գրականութեան վերաբերեալ ժողովածուներ կազմող և հրատարակողները (պ. Նաւասարդեաց և այլք) աշխատէին մինչև սեպտեմբեր յոյս ընծայել իրանց ժողովածուներից որքան հնար է. որպէս զի կարելի լինէր (ինչպէս մի քանիսը ուզում են) ներկայացնել այդ աշխատութիւնները հնագիտական ժողովին։ Առհասարակ՝ լաւ կը լինէր, որ հնագիտութեամբ, պատմութեամբ և ժողովրդակ. գրականութեամբ պարապող հայ անձինք հոգ տանէին իրանց աշխատութիւնների վրա և օրով առաջ պատրաստ էին իրանց անելիքը—եթէ ունեն ինչ անելիք։ Բայց ամօթ էլ կը լինէր, եթէ չունենան ինչ անելիք։

Գր. Խ.

Այս բոլորը այժմ հանդէս է գալիս և աղդում է երկու ազգութիւնների փոխադարձ յարաբերութիւնների վրա։

Մարսելի մէջ կատարված անկարգութիւնների պատճառով Փարիզի և Հռոմի մէջ միաժամանակ պարլամենտական հարցեր առաջարկվեցան իտալական և Ֆրանսիական կառավարութիւններին և, թէպէտ սրանք հանգստացնող մեկնութիւններ տուին, այնու ամենայնիւ Մարսելի մէջ պատահած անցքի վատ տպաւորութիւնը չէ ջնջվել։ Դեռ երկար ժամանակ կանցնի, մինչև այդ երկու ազգութիւնների մէջ կատարեալ համաձայնութիւն տիրէ, որ միատեսակ անհրաժեշտ է թէ Ֆրանսիայի և թէ Իտալիայի համար։

ՖՐԱՆՍԻԱ

Նորերումս Գամբետտա նախագահում էր սանդը շինողների ժողովին, որի ժամանակ արտասանեց հետևեալ կարճառօտ ճառը։ Վերջին երկու երեք տարիների ընթացքում Ֆրանսիայի մէջ Ճանապարհորդողի աչքն է ընկնում ոչ այնքան հանրապետութեան թշնամիների անզօրութիւնը, որքան հանրապետական կուսակցութիւնների մէջ տիրապետող միաբանութիւնը։ Նրա մէջ երևում է ժողովրդական բնաւորութեան մի նոր յատկանիշ, որի վրա դարձնում եմ անբաւականների ուշադրութիւնը։ Հանրապետական սովորութիւնները հիմնաւոր են դառնում։ Ժողովրդական այդ համերաշխութիւնը ինձ չափազանց ուրախացնում է։ Որքան կամենում են թող խօսեն մեզ վրա և ծաղրեն մեզ, բայց ես հաւատացած եմ, որ Ֆրանսիական հանրապետութիւնը երբէք մի ուրիշի չի նմանի և որ ոչ մի տեղ չէ կարելի գտնել այն ուրախութիւնը և լաւ ճաշակը, որոնք Ֆրանսիական ժողովրդի յատկանիշներն են։ Ես միշտ մեծ ուրախութեամբ եմ մտնում ձեր շրջանը, թողնելով քաղաքական բոլոր հոգսերը և այն ամենը, որոնց իմ եռանդուռ բարեկամները պարլամենտական դժուարութիւն են անուանում։ Այդ ասողները մեզ լաւ չեն ճանաչում։ Տասերկու տարի առաջ մենք մի դժուար ճանապարհորդութիւն սկսեցինք, յաղթեցինք միասին մեծ դժուարութիւնների, փոթորիկների ենթարկվեցանք, իսկ այժմ, երբ ամեն բան լաւ ապագայ է խոստանում հանրապետութեանը, աննշան վէճերի պատճառով մեր մէջ անմիաբանութիւն չի ընկնի։ Իւրաքանչիւր օր իր հարցն ունի և եթէ այդ հարցը չէ աջողվում, նրան սկսում են աւելի մեծ եռանդով մըշակել։ Ինչ ուզում են ասեն իմ մասին, բայց ես հաւատացնում եմ, որ ցանկանում եմ միայն մի շրջանի պատգամաւոր ընտրվել։

Թէ Գամբետտայի այս ճառը և թէ Ֆերրիի արտասանած ճառը լաւ տպաւորութիւն են գործել չափաւոր լրագիրների վրա, որոնց կարծիքով հանրապետականները նորից միացած են։ Այսուհետև կարելի է յուսալ որ պատգամաւորների ապագայ ընտրութիւնները համապատասխան կը լինեն այն չափաւոր քաղաքականութեանը, որ պաշտպանում էր մինիստր Ժիւլ Ֆերրի։

Պատգամաւորների ժողովի նիստի ժամանակ Մարսելի մէջ պատահած անկարգութիւնների մասին առաջարկած հարցին ներքին գործերի մինիստր Կոնստան պատասխանեց, որ Մարսելի պրեֆեկտը բոլոր միջոցները գործ է դրել նոր անկարգութիւնների առաջն առնելու համար։ Անկարգութիւնների պատճառը Ֆրանսիական բանուորների յարձակումն էր իտալացիների վրա։

Մարսելից հաղորդում են, որ այնտեղ ապրող բազմաթիւ իտալացիները ամենաչնչին վիրաւորանքների և ծեծի են ենթարկվել առանց որ և է առիթ տալու այդպիսի անկարգութիւններին։ Իտալական կլուբի նախագահը, վերադառնալով հիւպատոսի մօտ, սաստիկ ծեծվեցաւ։ Ամբոխը կամենում էր նրան ծովը գցել, երբ պոլիցիան նրան ազատեց։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻ

Վան, յունիս 5/17

Երկար ժամանակէ ի վեր Ռուսաստանէն լուր չունիմք երբէք, զի հաղորդակցութիւնք արգելուած են խստիւ, հետևապէս չը գիտեմք թէ ինչ չափ տեղեկութիւններ ունիք Վանայ վրայ, որ անոր համեմատ գրեմք, բայց և այնպէս հարկաւոր կը համարեմք գրել հետեւեալները։ Եթէ երկար հատորներով յօդուածներ ղրկելու լինիմք դեռ չեն պակսիր նիւթեր։

1) Անչուշտ գիտէք որ կառավարութիւնը ձըմեռուան վերջերը արգելից բոլոր բնակչաց զէնք կրել։ Այդ արգելքն թէպէտ ընդհանուր էր, բայց աւելի խստիւ հայոց վրայ կը գործադրուէր։ Այլ սակայն շատ չը տևեց և անհետացաւ գործադրութիւնը։

2) Կառավարութիւնը ամենասաստիկ խստութեամբ ծանրացեր է հայոց վրայ. բոլորովին կասկածելի կը համարի զանոնք։ Մասնախումբ մի ընտրած է դատելու կասկածաւորները։ Երկու շաբաթ է որ դատի ներքև դրած են մի ատենաբան իւր մի ատենախօսութեան համար, որոյ բնաբանն էր «ժամանակն հասած է, ինչ անենք»։ Բայց տակաւին չը կրցան դատապարտութեան մի կէտ գտնել նորա վրայ, թէպէտ հարցաքննութիւնք կը շարունակուին։

3) Մինչև ցարդ կը կարծուէր թէ Թիւրքին իւր բազմատեսակ զեղծմանց մէջ այս մի առաւելութիւն ունի, որ իւրաքանչիւր ազգի ներքին գործոց չը միջամտեր, և մասնաւորապէս հայոց սահմանադրութիւն տուած լինելով ազատ թողած է զանոնք իրենց ներքին գործոց մէջ, բայց ահա ձեռք զարկաւ այդ կողմն ալ և ինչպէս Կ. Պոլիս և այլ տեղեր, նոյնպէս և Վանայ մէջ սոսկալի արգելք դրած է հայոց դէմ գումարումներ չանել ոչ դպրոցի, ոչ տուներու մէջ, ճառեր չը կարդալ, սովելոց համար հանգանակութիւն չը ժողովել, և ասոնց նման ամեն տեսակ շարժումներէ հեռի մնալ։ Հեղինակներն պատժել սպառնալով և յայտնելով թէ ոստիկանութեան պատուէր եղած է անմիջապէս ձերբակալել այնպիսիները։ Այս սոսկալի արգելքը մեր ամեն նուիրական գործոց դէմ կը գայ, ոչ կրնամք ունենալ լարան, ոչ խօսարան և ոչ ալ հրապարակային դասարան։ Այս հրամանը հաղորդուեցաւ այստեղ մայիս 16-ին, և անմիջապէս գործադրել հրամայուեցաւ։ Ահա բարենորոգումները զորս Թիւրքիա յանձն առեր է գործադրել Հայաստան 61-դ յօդուածին համաձայն։ Այս օրուան օր կապուած է մեր ձեռքը, մեր լեզուն, պրկուած է մեր միտքը. մեր հոգին. արգելուած է մեզ խօսել և լսել, թոյլատրուած չէ հաղորդել մեզ իրարու գաղափարները, և դեռ կասեն թէ Թիւրքին ինքնին կրնայ բարեկարգել իւր հպատակաց վիճակը։ Կառավարութիւնը անչափ խստացաւ, մինչև անգամ արգելել ուզեց սահմանադրութեան 21-դ տարեդարձի հանդէսը կատարել, բայց կարգադիր մասնաժողովն ոչինչ կարեորութիւն չը տուաւ, այլ ներկայացուց հանդէսն Ցայնկոյսնեբու պարտէզին մէջ, Այգեստանին կից մի հովիտի մէջ. 4 հազարէն աւելի երկսեռ հանդիսական կար։ Տեղի ունեցաւ ճաշկերոյթ մը որոյ վրայ մասնաւոր զգացմամբ բաժակներ խմուեցան Վ. Հ. Ազգասանդր Գ. Կայսեր կենաց և նորա ներկայացուցչին ի Վան, վսեմ. պ. Կամսարականի համար։ Նոյնպէս Անգղիոյ թագուհւոյն և ազատական նախարարութեան ու նոցա Վանայ ներկայացուցիչ վսեմ. պ. Կլէյթնի համար բաժակներ քամուեցան և ուժգին ծափահարութիւնք եղան։ Բացի ճաշկերոյթէն, որ շատ փառաւոր բան մը էր, տեղի ունեցան նաև ձիարշաւ. խաղացողքն էին վարժապետանոցի աշակերտներն։ Հայկական պար խաղացին երիտասարդներ և հայկական նուագածուք կառաջնորդէին հանդէսը։ Նոյնպէս տեղի ունեցան նաև ատենախօսութիւնք, թէպէտ կառավարութեան կողմանէ յատկապէս ներկայացեալ պատգամաւորք արգելեցին, սակայն չը գործադրուեցաւ արգելքն ու ճառերն անմիջապէս առաւ մի պաշտօնատար վերջէն հարցաքննութեան ենթարկելու սպառնալեօք, բայց դեռ բան մը չեղաւ։ Տարեդարձն եղաւ մայիս 24 կիրակին։ Այդ հանդիսին շքով, ձայներով և նուագածուներով թնդաց բոլոր Այգեստան առաւօտէ մինչև երեկոյ. ծափահարութիւն և վկեցցէ-ի աղաղակներն օդը կը գոռացնէին, խայտաճամուկ դրօշակներ գեղածփեալ կը ծածանէին, ու հայկական սրտեր կը վառէին։

4) Մայիս 30-ին Վան բերուեցաւ ընդ հսկողութեամբ չարաշուք Շէյխ Ուպէյտուլլահ. մահմետականք վազեցին ընդ առաջ լցել ջերմեռանդութիւն այն սուրբ ձեռքն, որ հազարաւոր անհաւատից (?) արիւն թափեր էր. հայերն աճապարեցին ի դէմս նորա տեսնել թէ ինչ հրէշային կենդանիներ եղած են Ատտիղաս, Ճինկիզխան, Լէնկթեմուր, որոց ձագն լինել կը թուի դա, և նոցա արիւնազանգ փառաց նախանձորդ։ Այդ երկու տեսակէտով խիստ մեծ բազմութիւն մ'ընդ առաջ ելաւ նմա։ Բայց ոստիկաններն որք զայն կը պաշարէին և ձիուն սանձն անգամ թողած չէին նմա ազատ կառավարել, անմիջապէս կիմացուցէին որ մի եղեռնաւոր կը բերէին. դաժան էր իւր դէմքը և կիսավայրենեաց համանման։ Զգեստներն, մազերն, իւր բոլոր հանդերձունք կը մատնէին իսկոյն թէ ինչ ճիւաղ մի կը բնակէր այն մարմնոյն մէջ. սոսկմամբ դիտեցինք զայն։ Բայց կառավարութեան ամեն կարգի պաշտօնատարք, թէ քաղաքային, թէ զինուորական, յարգանօք ողջունեցին զնա, նոյնպէս և նահանգապետ փաշան, որք ընդ առաջ եկած էին Շէյխը ձերբակալող Միւշիր Նազիֆ փաշային (հրամանատար Դ. բանակին)։ Տակաւին չը գիտեմք անսխալ թէ ինչ պիտի լինի Շէյխին վիճակը, միայն զայս գիտեմք որ Կ. Պոլիս պիտի խրկեն զինքը. արդեօք պարսիկ կառավարութիւնը բաւական կը համարի այդչափ թեթև հատուցում, մինչդեռ իւր դժոխաչունչ որդիքը Շէյխ Սադրը և Ապտիւլ-Գատրը դեռ իրենց հայրենիքը կը մնան ազատ և անպատուհաս։ Ֆրանսայի կառավարութիւնը ափ մը մարդոց կոտորածին համար 20—25 հազար զօրք թափեց Թունուզ և գրեթէ գրաւեց զայն, մինթէ սպանուած ֆրանսացիք մարդ էին, և նոքա մարդ չեն որք անմիջաբար կոտորուեցան Շէյխ Ուպէյտուլլահի ձեռքով և հրամանով, որոց թիւը հազարներով աւելի է քան կոտորուած ֆրանսացւոց թիւը։ Մինթէ ինչ որ ճշմարտութիւն և արդարութիւն է Միջերկրական ծովուն եզերքը, այնպէս չէ Որմոյ ծովուն շուրջը, մինթէ ինչ որ իրաւունք ունէր ֆրանսացին իւր քաղաքացւոյն վրէժն առնելու համար, նոյնը չունի պարսիկն Շէյխին դէմ ի գործ դնել, բայց կը սպասեմք տեսնել թէ ինչպէս պիտի վարուի կառավարութիւնը Լէնկթեմուրի թոռան հետը։ Այլ սակայն ուշադիր ամեն մէկ անձի մասնաւոր մտադրութեան արժանի է Թիւրքիոյ ներկայ խելացեղ և ցնորական ընթացքը, վասն զի Թիւրքիա անմտացաւ նախ ոտք հանել ալպանիացիքը. զինել տուաւ, քաջալերեց զանոնք և միութիւն մը կազմեց, կարծելով թէ օգտակար պիտի ըլլար իրեն, բայց յետոյ ռումբ և սուր ի ձեռին բանակ խրկեց նոցա վրա և ջարդեց ու ցրուեց, զի ինչպէս ամեն խորհողը կրնար գիտնալ, բացի Թիւրքիոյ նախարարներէն, ապստամբեցան նոքա և Թիւրքիոյ գլխոյն ցեց եղան։ Նոյնպէս այդպիսի յիմարութեամբ գրգռեց Թիւրքիա անցեալ տարի զՇէյխ Ուպէյտուլլահ, ոտք հանեց, քաջալերեց ալպանիական միութեանը նման քրդական միութիւն մը կազմել, զոր եղած էր հռչակել այն ժամանակ Թիւրք մամուլն։ Բայց ահա հիմակ ալ ստիպվեցաւ մեծ ծախքեր անել Թիւրքիա ու Շէյխն ձերբակալել և ով գիտէ, թէ որչափ դըժուարութիւններ պիտի քաշէ մինչև բաւականացնէ պարսիկ կառավարութիւնը։ Ցիրաւի երբ մարդ մտածէ այս կէտերը, քաղաքական հիւանդութիւնէ ի զատ ուրիշ վիճակ չը կրնար ենթադրել Թիւրքիոյ արդի կացութիւնը։ Կառավարութիւն մը որ իւր քաղաքային շահերն այսչափ սխալ կըմբռնէ ու փոխանակ իմաստութեամբ կանխատեսելու, ինչպէս կենթարկուի յայտնապէս, այդպիսի կառավարութիւն մը կասեմք, ինչպէս կրնայ ժողովուրդ կառավարել ու հպատակներ գոհացնել։ Թող դատեն անոնք, որք յոյս ունեն Թիւրքիոյ վրա։

5) Մայիսի վերջեր դժբաղդ լուր մը լսեցինք Վանայ ծովուն արևմտեան եզերքին, Հին Խլաթ (որ այժմ կասուի Ախլաթ) գաւառի Թեղուտ գիւղը, որ զուտ հայաբնակ է, 200 տուն պարունակող, երկրաշարժէ մը կործանուեցաւ խպառ, տուն մը անգամ անվնաս չը մնաց, 93 անձինք, գլխաւորապէս կին, աղջիկ և տղայ. փլատակաց ներքև թաղուած մնան, 80-ի չափ վիրաւորեցան, որոց 33-ը ծանր վէրք ունին, և հետևապէս բոլոր գիւղացիք անպատսպար մնացած են։ Անդգամ քիւրդերն օգուտ քաղելով նոցա դժբաղդութենէն, կը յարձակին յափշտակել նոցա շարժէն ազատուած իրերն, ապրանքներն և տաւարեղէնք։ Առաջ. փոխ. գեր. Սրուանձտեանց ճամպարեց հանգանակութիւններ անելով օգնութիւն հասցնել կարօտելոց։ Սովելոց մասնաժողովն ալ իւր յատուկ բժիշկ և մասնաւոր այցելու մը որոշեց խրկել Թեղուտ։ Որպէս թէ կառավարութիւնն ալ մի մասնաժողով կազմած է հանգանակութեան համար, բայց դեռ ոչինչ չը հաւաքեց նա, զի թոյլ բռնած է կառավարութիւնը, քանի որ վնասուողներն հայեր են։ Եթէ քիւրդ կամ թիւրք լինէին նոքա, արդեօք այսպէս ծանր կը շարժէր։

6) Առաջիկայ հունձքերն խիստ առատ են. անձրևներն տեղացին կանոնաւորապէս ժամանակին, սովն վերջացած է խպառ, բայց արմտիք դեռ հնգապատիկ գին ունին, թէև խիստ առատութեամբ կը գտնուին հրապարակին վրայ։

ՍՄԲԱՏ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յունիսի։ „Голосъ“ հաղորդում է։ Երէկ Պետերգոֆի հին պալատում ճաշկերոյթ կար ի պատիւ Էդինբուրգեան պրինցի։

Կ. ՊՕԼԻՍ, 22 յունիսի։ Լուրերին համեմատ Աբդուլ-Ազիզի սպանման գործի պատճառով բոլոր դատապարտվածների մահվան պատիժները փոխարինված կը լինեն մշտական աքսորանքի Տօլֆու (?) Արաբիայում։

ԼՕՆԴՕՆ, 22 յունիսի։ Հարֆիլդ սպանված չէ, այլ վտանգաւոր կերպով վիրաւորված է։ Նրա առողջութիւնը մեծ վտանգի մէջ է։ Մեղաւորը յայտնվում է մի խելագար մարդ։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 21 յունիսի։ Հարֆիլդ վիրաւորված է աջ ձեռքում և մէջքում, գլնատակը մնած է ողնաշարի մօտ։ Բժշկները չեն վստահանում հանել գնտակը, վախենալով ներքին արիւնահոսութեան։ Եղեռնագործը Ամերիկա գաղթած մի Ֆրանսիացի է Գիտօ անունով։ Հաւատացնում են որ նա հոգեկան հիւանդութիւն ունի։ Յունիսի 21-ին մինիստրութեան կարգադրութեամբ կանչված է Վաշինգտօն փոխ-նախագահ Արչէր։

ՄԻՆՍԿ, 23 յունիսի։ Այստեղ սարսափելի հրդեհ է, 500 տուն արդէն այրվել են, ամբողջ քաղաքը բացվառվում է։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 22 յունիսի։ Հարֆիլդի առողջութիւնը փոքր ինչ լաւանում է։

ԲՕՄԲԱՅ, 22 յունիսի։ Էյիւբ-խան դուրս եկաւ 13-ին յունիսի Հերատից ամեն տեսակ զօրքերի հետ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յունիսի։ Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 95 ր. 50 կ., երկրորդ 94 ր. 50 կ., երրորդ 94 ր. 37½ կ., չորրորդ 94 ր. 25½ կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմակը 228 ր., երկրորդ 220 ր. 75 կ., արևելեան առաջին 92 ր. 62½ կ., երկրորդ 92 ր. 75 կ., երրորդ 92 ր. 50 կ., ոսկի 7 ր. 85 կ։ Ռուսաց մի ռուբլի Լօնդոնի վրա արժէ 26,6 պէնս, Ամստերդամի վրա 126,87 պէնս, ռուսաց 100 ր. Լօնդոնի վրա առժէ 215 մարկ, Փարիզի վրա 264 Ֆրանկ 75 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ТИФЛИССКІЯ ОБЪЯВЛЕНІЯ

НА ПОЛГОДА въ Тифлисѣ . . . . . 2 руб.
Для иногородныхъ . . . . . 4 „
на Дворцовой улицѣ въ домѣ Сараджева.

6—3

Ա. ՊՐԻԴՕՆՕՎԻ ԵՒ Ի. ՇԱՀՆԱԶԱՐՕՎԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԱԿԸ *կատարում է հետևեալ գործողութիւնները.* 1) *գնում է և ծախում է տոկոսաբեր թղթեր, սերիաներ և ոսկի,* 2) *պարաք է տալիս տոկոսաբեր թղթերի և ակցիաների գրաւականով,* 3) *ապահովում է ներքին 1-ին և 2-դ փոխառութեան տոմսակները իւրաքանչիւրը 50 կ., օտարաքաղաքացիք պէաք է ուղարկեն մարկա և 10 կ. ապահովագրի համար,* 4) *ընդունում է մուտքեր ժամանակաւոր, ցպահանջումն և ընթացող հաշիւ,* 5) *ընթացող առանձին հաշիւ է բանում տոկոսաբեր թղթերի գրաւականով,* 6) *կատարում է զանազան հիմնարկութիւնների և մասնաւոր անձանց բանկային յանձնարարութիւններ։*

Գրասենեակը վերցնում է ապահոված գումարների համար $7\frac{1}{2}\%$, *առանձին ընթացող հաշիւներին* 8% *և պարքեր տալիս է մեծ չափով։*

Վճարում է մուտքերին ցպահանջումն 5%, *ժամանակաւոր* $\frac{1}{2}$ *տարով* $5\frac{1}{2}\%$, 1 *տարով* 6%։

Գրասենեակը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Պետական բանկի բաժնի հանդէպ, Ա. Պրիդօնովի տանը։

3—3 (2)

„ԽԵՆԹԸ“

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ԲԱՖՖԻ

Տպված մաքուր թղթի վրա, գիրքը բաղկանում 400 *երեսից։ Թիֆլիսում ծախվում է „Մշակի“ խմբագրատանը, „կենտրոնական գրավաճառանոցում“, „կովկասեան գրավաճառանոցում“ պ. Զաքարիա Գրիգորեանցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բօզաջեանցի, Հովուեանցի ծխախոտի մագազինների մոտ։*

Գինն է **1** *ռուբլ* **20** *կոպ.։*

ՋԱՆՋՈՒՂԱԶՈՎՆԵՐԻ *Մոսկվայի պարտատէրերի* **ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ Պ. Մ. ԼԵԲԵԴԻՆՍԿԻ** *ընդունում է քրէական և քաղաքական գործերի պաշտպանութիւնը Թիֆլիսի դատարանների մէջ։ Խորհուրդները* **ԶՐԻ** *են տրվում։ Ընդունելութիւն իւրաքանչիւր օր երեկոյեան* 5—7 *ժամը, բացի շաբաթ և կիրակի օրերից։ Գոլովինսկի փողոց, տուն Միրիմանովի, Սաքարթվելո հիւրանոց։*

3—6

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԲՐՕՇԻՒՐՆԵՐ

Ռուսերէն, հայերէն և վրացերէն

Ռուսերէն 30 *տեսակից* 30 *հատը* 1 *ռ. հայերէն* 3 *տեսակից* 50 *հատը* 1 *ռ. վրացերէն* 7 *տեսակից* 50 *հատը* 1 *ռ. մեր հասցէն.* Тифлисъ, Елизаветинская ул. № 71, Аврааму Амирханьянцъ.

4—20 (2)

---

144 Աբթրուանու գալէրէա 144
ամենաէժան պահեստ մեբէլի և հայելիների։

Հրատարակութեամբ Ներսիսի Սիմէոնեանց լոյս տեսաւ գերմանացի բժիշկ Շրէբերի „Տնային բժշկական մարմնամարզութեան“ գրքոյկի հայերէն թարգմանութիւնը 45 *պատկերով, որոց միջոցաւ կարելի է կատարել առողջապահական բազմատեսակ մարմնամարզական կրթութիւններ ամեն տեղ, ամեն ժամանակ և առանց գործիքի։ Նա յարմարացրած է ամեն հասակի արանց և կանանց համար։ Գինն է* 40 *կոպ. Ծախվում է „կենտրոնական և կովկասեան գրավաճառանոցներում, նոյնպէս և պ. Մ. Վարդանեանցի մոտ.“* Тройцкій пер. типографія Вартанянца, въ Тифлисъ.

ԲՕՍՏՕՎ ԴՕՆԻ-ՎՐԱ ՔԱՂԱՔԻ ԴՈՐԾԱՐԱՏԷՐ ԵԱ. Ս. ԿՈՒՇՆԱՐԵՕՎ *յայտնում է հետևեալը. Իմ ծխախոտի արդիւնաբերութեան մեծ պահանջը դրդեց Թիֆլիսի գործարանատէր Պիրալով և ընկ. և Գալեգովին նմանվել իմ արդիւնաբերութեան ձևին զանազան անուններով, մանաւանդ „Լորիս-Մելիքով“, „գեներալ Գէցման“ և „գեներալ Սկոբելև“։ Նախազգուշացնելով իմ ծխախոտը գործածողներին, խնդրում եմ ուշադրութիւն դարձնել իմ ֆիրմայի հետևեալ նշանների վրա.* 1) *Հրապարակական հաւանութիւն* 1865 *թուականի Մոսկվայի հանդէսից,* 2) *Ոսկեայ մեդալ Մոսկվայի տեխնիկական հանդէսից* 1872 *թ.,* 3) *Պատուաւոր կարծիք* 1873 *թ. Վիէննայի աշխարհանդէսից,* 4) *մեծ մեդալ* 1876 *թ. Ֆիլադելֆիայի միջազգային աշխարհանդէսից,* 5) *Արծաթէ մեծ մեդալ* 1878 *թ. Փարիզի աշխարհանդիսից, իսկ այդ նշանները չունեցող արդիւնաբերութիւնը խնդրեմ կեղծ համարել։ Մակերօնիացից նոյեմբերումն ստացայ ամենալաւ հոտաւետ ծխախոտ։ Լաւ յատկութեան ծխախոտ սիրողներին խնդրեմ դիմել Թիֆլիսի մէջ. Սպիրիդոն Իվանովիչ Պոպովին, Բամազովին, Բայանդուրովին, Միկիրտումովին, Բէժանովին, Տէր-Գրիգորեանց և ընկ. և դէպօն, որ գտնվում է Գոլովինսկի փողոցի վրա, Իշխան Բագրատիօն-Մուխրանսկու տանը։ Այդ անձինք ուղղակի իմ գործարանից են ստանում ծխախոտը։*

Բօստովի 1-*ն գիլդիայի վաճառական և ծխախոտի գործարանատէր* ԵԱԿՕՎ. ՍԵՄԵՈՆՕՎԻՉ ԿՈՒՇՆԱՐԵՕՎ։

12—12

ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԷԼ *(աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կատոլիկոց փողոցի անկիւնում* ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ *պահեստում։*

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

27—150

Արդէն ուղարկվեցաւ իւր բաժանորդներին **ՐԱՖՖԻԻ „ԽԵՆԹԸ“** *անուանով միպատանութիւնը։ Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք դիմել* ՇՈՒՇԻ, *կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահտեսի-Յակոբեանցի տպարանը։* ԲԱԳՈՒ՝ *պ. Աղեքսանդր Թարխանեանցին,* ԹԱՐՎԷԶ՝ *պ. Գրիգոր Բէջանեանցին.*

Հրատարակչի հասցէն. Шуша, въ конторѣ Арунянца АБѢЛУ АПРѢСЯНЦУ.

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, *մազերը ամրացնող և նրանց* **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** *վերադարձնող։ Գինը* 2 *ր. շիշը,* **ՓՈՍՏՅՈՎ** *ուղարկված* 2 *ր.* 49 *կոպ.։* **ԱՆԳԼԻԱԿԱՆ** *խանութի մէջ։*

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻՒՂ**, *մազերը ամրացնելու համար,* 1 *ր. ամանը վրձին զլխացաւի դէմ,* **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** *և հոտաւէտ ջրեր և այլն։*

88—100

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Հանմատեցէք	Թէյի	Ֆունտը	1 ր. 5 կ.	Մոսկվայից	բերվող	Թէյի	հետ	Ֆ. 1 ր. 30 կ.
—	—	—	1 ր. 10 կ.	—	—	—	—	Ֆ. 1 ր. 40 կ.
—	—	—	1 ր. 20 կ.	—	—	—	—	Ֆ. 1 ր. 60 կ.
—	—	—	1 ր. 40 կ.	—	—	—	—	Ֆ. 1 ր. 80 կ.
—	—	—	1 ր. 60 կ.	—	—	—	—	Ֆ. 2 ր. —
—	—	—	1 ր. 80 կ.	—	—	—	—	Ֆ. 2 ր. 50 կ.
Ամենալաւը	—	—	2 ր. —	—	—	—	—	Ֆ. 3 ր.

100—100

ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ 4 *ր.,* *ծրծողներ* 1 *ր.,* *ծալվող աթոռներ* 1 *ր.* 50 *կ.,* ՓԱՑՏ-ԱԹՈՌ 4 *ր.,* ԲԱԶԿԱԹՈՌ-ՄԱՀՃԱԿԱԼ 10 *ռուբլ և աւելի,* *թէյի բաժակներ* 25 *և* 30 *կ., մի ման քորոցներ* 50 *կ., պատեղա ծխողների համար* 60 *կ. ֆունտը, անգլիական* ՎԱՆՆԱՆԵՐ *և այլն ծախվում են* **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։**

10,000 *զոյգ զուլբաներ* 25 *կ.—ից զոյգը,* 10,000 *զոյգ կանանց* ԳՈՒԼԲԱՆԵՐ 30 *կ.—* 1 *ր.,* 7,000 *մատուցարաններ* 5 *կ.—*5 *ր.,* 1,000 ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 5 *ր.—*35 *ր.,* 400 *արշին բօմբազէյ.* 1 *ր.—*1 *ր.* 30 *կ., պարուսինա* 40 *կ.—*1 *ր.,* 300 *հատ բէվօլվեր* 4 *ր.—*35 *ր.,* 700 *ալբոմ* ԿԻՍԱԳՆՈՎ, 10,000 *ֆունտ թէյ* ԹԷՅԱՄԱՆՈՎ 1 *ր.* 65 *կ.։ Երկաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի համար։ Ծախվում են* **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** *մէջ։*

9—100

Մի երիտասարդ, որ գիտէ հաշուապահութիւն, ռուսերէն և հայերէն (двойная италіанская бухгалтерія) *ցանկանում է կանտորչիկի պաշտօն. հասցէն կարելի է իմանալ պ. Աւետիք Էնֆիաճեանցի գրավաճառանոցում։*

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ «МШАКѢ».

Цѣна 25 коп.

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% **ԷԺԱՆՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ.** *Մուրաբաներ, կոնֆեկտներ,* **ԿԱԿԱՕ**, *բրինձ, ամանեղէն, բօկալներ, թասեր, երես լուանալու ամաններ, չայնիկներ,* ԲԱԺԱԿՆԵՐ, *կերակրի ամաններ* (судки), *մատուցարաններ,* ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, *գդալներ,* ԳՐԻՁՆԵՐ, *թուղթ, մատիտներ, տետրակներ,* ՀՐԱՑԱՆՆԵՐ, ԲԷՎՕԼՎԵՐՆԵՐ, *ալբոմներ,* ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, *տրիկօ, պարուսին, թաշկինակներ, երեսսրբիչներ, կլեօնկա, զուլբաներ,* ԹԱՄԲԵՐ, ՊՕՐՏ-ՎԷՅՆ, *խերես, կոնեակ և այլն։* Թէց *մեծ քանակութեամբ* ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ *համար* ՊՈՒԴՐ 44 *ր.,* 46 *ր.,* 48 *ր.,* 50 *ր.,* 52 *ր.,* 54 *ր., և այլն։ Այդ բոլորը կարելի է գտնել* **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։**

Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԷՐԲԵՏ *մանգեզիա, խմոր* ԾԱՐԱՒԻ *դէմ,* ԽԻՆԱՅԻ *գինի ջերմի դէմ, կարբոլեան* ՓՕՇԻ, *հեղուկ և* ՍԱՊՕՆ, *բժշկական թուղթ վատերկլօզեաի համար, պարսկական փոշի։*

23—100

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

Կամենում է ամառուան արձակուրդներին ունենալ դասեր։ Կարող է պատրաստել Բեալական և Ներսիսեան դպրոցի I, II *և* III *դասատանց համար, բաւարար վարձատրութեամբ։ Հարցանել պ. Էնֆիանճեանցի գրավաճառանոցում, պ. Շահինեանցի ծխախոտի մագազինում, Շապինովի քարվանսարայում* № 16.

1—5

Մինչև առաջիկայ սեպտեմբեր լոյս կը տեսնի ՖԻԶԻԿԱԿԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ *և* ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ *հայ տղայոց և օրիորդական ուսումնարանների համար։ Ցանկացողները կարող են դիմել ուղղակի աշխատասիրողին հետևեալ հասցէով։*

Тифлисъ. Армянская Духовная Семинарія Нерсесьянъ. *Учителю А. Теръ-Акопьянцъ.*

Дозволено цензурою, Тифлисъ. 24 Іюня 1881 года.

Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.